

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի I Ներածություն

1. Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի հայեցակարգը (այսուհետև՝ հայեցակարգ) իրենից ներկայացնում է 2010-ից մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի զարգացման ուղղությունները և ընդգրկում է շինարարության բնագավառում տեխնիկական նորմավորման և ստանդարտացման առկա խնդիրները, նպատակները, սկզբունքները և զարգացման հիմնադրույթները և հիմք է հանդիսանում քաղաքաշինական նորմերի կիրառելիության ամբողջական համակարգի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի՝ միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ, արդիականացված միջոցառումների ծրագրի կազմման համար:

2. Սույն հայեցակարգը մշակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառի ընդհանուր տեխնիկական նորմավորման միջազգային լավագույն փորձը:

3. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի համաձայն քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգը

քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց է, որը սահմանում է շենքերի և շինությունների հուսալիության, սեյսմիկ անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ, հաշմանդամների տեղաշարժման մատչելիությունն ապահովող և այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ, ինչպես նաև դրանց նախագծման, շինարարության իրականացման ու շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ:

II Առկա խնդիրները և առաջարկվող լուծումները

4. Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերը կազմում են քաղաքաշինության բնագավառի իրավական ակտերի բաղկացուցիչ մասը, որոնցով սահմանված նորմատիվ-տեխնիկական պահանջների կատարումը պարտադիր է քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար:

5. Ներկայումս քաղաքաշինության բնագավառում նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգը կանոնակարգվում է ՀՀՇՆ I-1.01-95 «Նորմավորման և ստանդարտացման համակարգ շինարարությունում. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերով, որի համաձայն քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերն են.

1) Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը-ՀՀՇՆ, միջպետական շինարարական նորմերը- ՍՆիՊ,

2) շինարարության բնագավառում ազգային ստանդարտները- ՀՍՏ, ՀՍՏ ԳՕՍՏ, միջպետական ստանդարտները-ԳՕՍՏ,

3) շինարարական նորմերի ձեռնարկները-ՇՆՁ և միջպետական շինարարական հանձնարարականները-ՄՍՊ,

4) համակարգի ղեկավար փաստաթղթերը- ՂՓ:

6. Հիմնվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մայիսի 26-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակման և հաստատման կարգը սահմանելու մասին» № 351 որոշման վրա Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը հրապարակում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցանկը:

7. Մյուս կողմից, 1999 թվականի դեկտեմբերից ուժի մեջ է մտել «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով սկիզբ է դրվել հանրապետությունում ստանդարտացման համակարգի բարեփոխումներին: Նշված օրենքը կոչված է ստանդարտացման աշխատանքներում ապահովել հաշվեկշիռը պետության, տնտեսվարող սուբյեկտների, հասարակական կազմակերպությունների և սպառողների շահերի միջև: Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միանալու գործընթացին նպաստելու, ինչպես նաև ստանդարտացման միջազգային գործելակարգը Հայաստանի Հանրապետությունում ներդնելու նպատակով, «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրվել է տեխնիկական կանոնակարգերի մշակման անհրաժեշտությունը: Օրենքում, մասնավորապես, ամրագրված է, որ տեխնիկական նորմավորումն իրականացվում է տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ընդունման միջոցով, որոնցով սահմանված պահանջների պահպանումը կապահովի արտադրանքի, դրա արտադրության, փոխադրման, պահման, շահագործման, օգտահանման գործընթացների անվտանգությունը:

8. ԱՅԿ «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունվարի 11-ի «Տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման և կիրառման կարգը հաստատելու մասին» № 9 որոշման համաձայն, տեխնիկական կանոնակարգերի մշակման համար հիմք են ծառայում ազգային ստանդարտները, եթե դրանք համապատասխանում են միջազգային ստանդարտներին:

9. Տեխնիկական կանոնակարգերը ընդունվում են մարդու կյանքի և առողջության, ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գույքի, կենդանիների և բույսերի կյանքի և առողջության, շրջակա միջավայրի պաշտպանության, սպառողներին թյուրիմացության մեջ զցող գործոնների կանխարգելման նպատակներով:

10. Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերով սահմանվում են շինարարության կազմակերպման, շենքերի և շինությունների նախագծման, շինարարական արտադրության իրականացման և ընդունման, տեխնիկական սպասարկման պահանջներ:

11. Այսպիսով՝ տեխնիկական կանոնակարգերը և Հայաստանի Հանրապետության ներկայումս գործող շինարարական նորմերը (ՀՀՇՆ) քաղաքաշինության բնագավառում գործող իրավական ակտի կարգավիճակ ունեցող, պարտադիր պահանջներ սահմանող նորմատիվ փաստաթղթեր են:

12. Համաձայն Եվրամիություն-Հայաստան համագործակցության ծրագրի, Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտների և շինարարական նորմերի, ինչպես նաև համապատասխանության գնահատման համակարգի բարեփոխումներ՝ Եվրամիության չափանիշներին ներդաշնակեցման պարտավորությունը: Ելնելով դրանից, քաղաքաշինության բնագավառի նորմատիվ և իրավական դաշտի բարեփոխումների տեսլականը պետք է ուղղված լինի Եվրամիության չափանիշներին համապատասխանեցմանը:

Այն իրականացվելու է «Քաղաքաշինության մասին», «Ստանդարտացման մասին» և «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում և դրանց ենթաօրենսդրական ակտերում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով: ԱՀԿ-ի «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի և նշված օրենսդրության դրույթների կատարման համար 2010 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին, ցեմենտներին և շինարարական ապակիներին ներկայացվող պահանջների կատարումն ապահովող միջազգային և եվրոպական ստանդարտներին նույնական ստանդարտացման ազգային մարմնի կողմից հաստատված 70-ից ավելի ազգային ստանդարտներ:

13. Քաղաքաշինության բնագավառում եվրոպական տեխնիկական օրենսդրությունը իրենից ներկայացնում է հավասարակշռված համակարգ՝ ուղղված ազատ առևտրի ապահովմանը Եվրամիության շրջանակներում: Շինարարական արտադրանքի նկատմամբ հիմնական պահանջները ներկայացված են 89/106/ԵԵՍ (EEC) «Շինարարական արտադրանք» դիրեկտիվում (այսուհետև՝ դիրեկտիվ), որն ուղղված է շինարարական արտադրանքի ոլորտում Եվրամիության անդամ-պետությունների օրենսդրության հավասարազորության սկզբունքների ապահովմանը: Դիրեկտիվի ընդունումը պայմանավորված էր Եվրամիության անդամ-պետությունների ազգային ստանդարտները միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակման անհրաժեշտությամբ՝ կախված կլիմայական պայմաններից և մարդկանց ապրելակերպից:

14. Դիրեկտիվի հիմնարար պահանջները ներկայացված են ըստ շինարարական արտադրանքի հետևյալ բնութագրերի.

- 1) շենքերի և շինությունների մեխանիկական ամրություն և կայունություն,

- 2) անվտանգություն հրդեհի դեպքում,
- 3) հիգիենիկ, առողջապահական և շրջակա միջավայրի անվտանգություն,
- 4) անվտանգություն շահագործման ընթացքում,
- 5) պաշտպանություն աղմուկից,
- 6) էներգախնայողություն և ջերմության պահպանում:

15. Շինարարական արտադրանքի համապատասխանության հավաստումն իրականացվում է ըստ Եվրամիության դիրեկտիվի պահանջների, որոնց կատարումը ապահովելու համար կիրառվում են Եվրոպական ստանդարտները (ԵՆ):

16. Եվրամիության անդամ-պետություններում շինարարական արտադրանքը ենթակա է համապատասխանության հավաստման: Շինարարական արտադրանքների համապատասխանության հավաստման համար նորմատիվ փաստաթղթեր են հանդիսանում այն ստանդարտները, որոնք տրված են Եվրամիության դիրեկտիվի պահանջների կատարումն ապահովող նորմատիվ փաստաթղթերի ցանկում:

17. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի առկա վիճակը և համապատասխան միջազգային փորձն, առաջարկվում է դրա զարգացումն ապահովել տեխնիկական կանոնակարգերի շրջանակներում՝ սահմանելով շինարարական նյութերին, շինվածքներին և արտադրանքին ներկայացվող պարտադիր պահանջները, միաժամանակ ստեղծելով իրավական և նորմատիվ հիմքեր՝ վերջնական արտադրանք հանդիսացող շենքերի և շինությունների որակի ապահովման և համապատասխանության հավաստման ընթացակարգերի կատարելագործման համար: Տեխնիկական կանոնակարգերով պետք է սահմանվեն քաղաքաշինության

բնագավառի նորմատիվ փաթաստաթղթերուն ներառված այն պահանջները, որոնք ամրագրված են օրենսդրությամբ:

18. Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերը և քաղաքաշինության բնագավառի այլ նորմատիվ փաստաթղթերը հիմնականում պետք է ստանան ազգային ստանդարտների և կանոնների հավաքածուների կարգավիճակ՝ հանդիսանալով տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների կատարումն ապահովող ապացուցիչ հենքը:

19. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի ներդաշնակեցումը Եվրամիության չափանիշներին՝ կնպաստի շինարարության արտադրանքների համատեղելիությանը, դրանով իսկ խթանելով օտարերկրյա ներդրումների ծավալների աճը հանրապետության շինարարության բնագավառում: Բացի այդ, տեխնիկական կանոնակարգերի ներդրումը նպաստավոր պայմաններ կստեղծի Հայաստանի Հանրապետությունում արտադրվող շինարարական նյութերի՝ Եվրամիության և ԱՊՀ անդամ-պետություններ արտահանման համար, և ընդհանուր առմամբ նախադրյալներ կստեղծի համաշխարհային շուկայում հայրենական շինարարական արտադրանքի մրցունակության բարձրացմանը: Քաղաքաշինական բազայի զարգացման սույն հայեցակարգով առաջարկվող տեսլականը համահունչ է նաև ԱՊՀ անդամ պետությունների և մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության քաղաքաշինության բնագավառի զարգացման պետական քաղաքականությանը:

III Քաղաքաշինության բնագավառում տեխնիկական կանոնակարգման հիմնական նպատակներն ու սկզբունքները

20. Քաղաքաշինության բնագավառում տեխնիկական կանոնակարգումը իրականացվում է հաշվի առնելով շինարարական արտադրանքի, դրա արտադրության կազմակերպման առանձնահատկությունները և դրան ներկայացվող պահանջներին համապատասխանության գնահատումը: Տեխնիկական կանոնակարգումը իրականացվում է շինարարության բնագավառի տեխնիկական կանոնակարգերի պարտադիր պահանջների մշակման, ընդունման, կիրառման և կատարման, շինարարական արտադրանքի արտադրման, շահագործման և օգտահանման գործընթացների այդ պահանջներին համապատասխանության գնահատման, ինչպես նաև կանավոր հիմունքներով քաղաքաշինության բնագավառի ազգային ստանդարտների մշակման ու կիրառման և կանավոր նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման միջոցով:

21. Տեխնիկական կանոնակարգման սկզբունքները պետք է համապատասխանեն «Ստանդարտացման մասին», «Համապատասխանության գնահատման մասին» և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով ամրագրված դրույթներին, հաշվի առնելով շինարարական արտադրանքի և դրա արտադրության կազմակերպման, շինվածքներին և նյութերին ներկայացվող պահանջների համապատասխանության հավաստման առանձնահատկությունները:

22. Քաղաքաշինության բնագավառում տեխնիկական կանոնակարգման օբյեկտներն են՝

1) շինարարական արտադրանքը՝ բնակելի շենքեր, հասարակական շենքեր և շինություններ ու դրանց համալիրներ, արդյունաբերական կազմակերպությունների, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, ջրային, գյուղական և քաղաքային տնտեսության շենքեր և շինություններ, ինչպես նաև այլ շինարարական օբյեկտներ,

2) շինարարական արդյունաբերության արտադրանքը՝ շենքերի և շինությունների կառուցման ժամանակ օգտագործվող շինարարական նյութերը և շինվածքները,

3) շինարարական գործընթացները (շենքերի և շինությունների հետազոտում, նախագծում, կապիտալ նորոգում, կոնսերվացում, շահագործում, ընթացիկ նորոգում, վերակառուցում, ապամոնտաժում, քանդում, օգտահանում), ինչպես նաև աշխատանքները և շինարարության բնագավառում մատուցվող ծառայությունները:

23. Տեխնիկական կանոնակարգերը և կանավոր օգտագործման նորմատիվ փաստաթղթերը ամբողջությամբ կազմում են քաղաքաշինության բնագավառի տեխնիկական կանոնակարգման նորմատիվ բազան:

IV. Շինարարական տեխնիկական կանոնակարգերը

24. Քաղաքաշինության բնագավառի տեխնիկական կանոնակարգերը մշակվում և ընդունվում են «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

25. Քաղաքաշինության բնագավառում մշակվող տեխնիկական կանոնակարգերը պետք է սահմանեն շենքերի և շինությունների անվտանգության ապահովման պահանջներ դրանց կյանքի ցիկի բոլոր փուլերում, ներառյալ ինժեներական հետազոտությունները, նախագծումը, շինարարությունը, շահագործումը, քանդումը:

26. Քաղաքաշինության բնագավառում տեխնիկական կանոնակարգերը ձևավորվում են շենքերի և շինություններին ներկայացվող անվտանգության պահանջների հիման վրա, որոնք ներառված են շինարարական նորմերում՝ հաշվի առնելով գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիայի նորագույն նվաճումները:

27. Տեխնիկական կանոնակարգերի պահանջները սահմանելիս պետք է հաշվի առնվեն շինարարության բնագավառում միջազգային առևտրային համագործակցության համար արգելքների վերացման ոլորտում գործող

միջազգային կազմակերպությունների հանձնարարականները, այդ թվում՝ Եվամիության 89/106/ ԵԵՍ (EEC) դիրեկտիվան, ինչպես նաև միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտները:

28. Քաղաքաշինության բնագավառում տեխնիկական կանոնակարգերի մշակումը կնպաստի շինարարության առջև դրված խնդիրների լուծմանը և կապահովի.

1) շինարարական արտադրանքի, դրա ստեղծման գործընթացների, շահագործման և քանդման անվտանգությունը՝ մարդկանց կյանքի և առողջության, գույքի և շրջակա միջավայրի համար,

2) շինարարական արտադրանքի համապատասխանությունը իր նշանակությանը և շինարարական արտադրանքի օգտագործողների և այլ անձանց կենսագործունեության նպաստելի պայմանների ստեղծմանը,

3) շինարարական արտադրանքի և մարդկանց պաշտպանությունը շահագործման հաշվարկային պայմաններում անբարենպաստ ազդեցություններից՝ հաշվի առնելով բնածին և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկը,

4) շինարարական կոնստրուկցիաների և հիմնատակերի, ինժեներական սարքավորանքի համակարգերի, շենքերի և շինությունների հուսալիությունը և որակը,

5) շրջակա միջավայրի պաշտպանությունը շենքերի և շինությունների անբարենպաստ ազդեցություններից, բնական, նյութական, վառելիքաէներգետիկ և աշխատանքային պաշարների նպատակահարմար օգտագործումը,

6) արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների մրցունակության բարձրացումը,

7) հետազոտությունների, փորձարկումների և չափումների արդյունքների

համադրելիությունը,

8) արտադրանքի համափոխարինելիությունը,

9) միջազգային առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը:

**V. Շինարարությունում տեխնիկական կանոնակարգման
փաստաթղթերի համակարգը՝
կամավոր կիրառման համար**

29. Քաղաքաշինության նորմատիվ փաստաթղթերի համակարգում ներառվող նորմատիվ փաստաթղթերը մշակվում են որպես միջգերատեսչական կարգավորման միջոց շինարարությունում:

Համակարգում պետք է ներառվեն՝

- 1) Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը (ՀՀ ՇՆ),
- 2) շինարարական նորմերի ձեռնարկը (ՇՆՁ),
- 3) տեխնիկական պայմանները (ՏՊ):

Նախատեսվում է սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում թվարկված նորմատիվ փաստաթղթերը վերանայելու ժամանակ փոխարինել քաղաքաշինության բնագավառում կիրառելի միջազգային ԻՍՕ/ԻԷԿ Գայդ 2-204 ուղեցույցով ամրագրված «կանոնների հավաքածու» նորմատիվ փաստաթղթով: Այն հնարավոր կլինի իրականացնել «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

30. Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը, ինչպես նաև շինարարական նորմերի ձեռնարկները մշակվում են կամավոր օգտագործման համար օբյեկտների ինժեներական հետազննությունների, նախագծման, շինարարության, փորձարկման, հսկողության և շահագործման, ինչպես նաև շինարարական պատրաստվածքների (շինվածքների) և օգտագործվող նյութերի մշակման և արտադրության ժամանակ:

31. Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը (կանոնների հավաքածուները) ներառում են շինարարությանը

ներկայացվող պահանջներ տեխնիկական կանոնակարգման օբյեկտների վերաբերյալ և ընդունվում են պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:

32. Շինարարական նորմերի ձեռնարկները ներառում են շինարարական նորմերի և պահանջների իրականացման միջոցները, և հանդիսանում են որպես համակարգի նորմատիվ փաստաթուղթ, ինչպես նաև որոշում են սահմանված նորմատիվ պահանջներին հասնելու ամենաարդյունավետ ուղիները, մանրամասնում են դրանց առանձին դրույթները, հանձնարարում են կիրառել հաշվարկման, փորձարկման, հսկման ժամանակակից մեթոդներ և այլ օժանդակ ու տեղեկատու նյութեր:

33. Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի և շինարարական նորմերի ձեռնարկների հանձնարարելի պահանջները դառնում են պարտադիր, եթե դրանց վրա կատարված է հղում պատվիրատուի հետ կնքված պայմանագրերում, ինչպես նաև նախագծային փաստաթղթերում:

34. Համակարգի կազմում ներառվում են նաև ստանդարտացման ազգային մարմնի կողմից հաստատված ազգային ստանդարտները և որպես ազգային կարգավիճակով կիրառվող միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտները, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունված կանոնների հավաքածուները, որոնցով սահմանված են կամավոր կիրառման համար շենքերի և շինությունների առանձին մասերի կոնկրետ բնութագրեր, շինարարական շինվածքներին և նյութերին ներկայացվող պահանջներ, ինչպես նաև փորձարկման մեթոդներ: Այդ ստանդարտներով և կանոնների հավաքածուներով սահմանված պահանջները դառնում են պարտադիր կիրառման, եթե դրանց վրա կատարված են հղումներ տեխնիկական կանոնակարգերում կամ տեխնիկական կանոնակարգերի բացակայության դեպքում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

հաստատված պարտադիր կիրառման համար ամրագրված ստանդարտների և կանոնների հավաքածուների ցանկում:

35. Նորմատիվ պահանջների բացակայության դեպքում, որոնց պետք է բավարարի շինարարական արտադրանքը և որոնցով պետք է կատարվի դրանց համապատասխանության հավաստումը, այդ թվում նախագծերի փորձաքննությունը, նախագծային, կոնստրուկտորական կամ տեխնոլոգիական փաստաթղթերի կազմում կարող է մշակվել տեխնիկական պայմաններ: Տեխնիկական պայմանները հանդիսանում են մշակված փաստաթղթերի անբաժանելի մասը:

Շենքին կամ շինությանը պահանջներ սահմանող տեխնիկական պայմանները մշակվում են շինարարության պատվիրատուի որոշմամբ:

36. Համակարգի նորմատիվ փաստաթղթերի դրույթները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերի դրույթներին և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին:

VI. Քաղաքաշինության բնագավառում տեխնիկական

կանոնակարգման համակարգի զարգացման հիմնադրույթները

37. Քաղաքաշինության բնագավառում տեխնիկական կանոնակարգման համակարգի ներդրումը ենթադրում է այդ բնագավառի նորմատիվ փաստաթղթերի կազմի և դրանց գործառնական մշակության վերանայումը: Շինարարական նյութերի, շինվածքների, արտադրանքի և գործընթացների հիմնարար պահանջները պետք է ներկայացված լինեն համապատասխան տեխնիկական կանոնակարգերում:

38. Բացի այդ պետք է լրամշակվի քաղաքաշինության բնագավառի ազգային ստանդարտների, Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի և շինարարական նորմերի ձեռնարկների բազան, որոնցից ստանդարտները և կանոնների հավաքածուները կազմելու են

տեխնիկական կանոնակարգերի ապացուցիչ հենքը (տեխնիկական կանոնակարգերում դրանց վրա հղում կատարելու միջոցով): Միջազգային չափանիշներին բավարարող անվտանգության պահանջներ պարունակող Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի համապատասխան բաժինները պետք է ներառվեն մշակվող տեխնիկական կանոնակարգերում:

39. Այսպիսով՝ առաջարկվող բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերի բազա հանդիսանալու են տեխնիկական կանոնակարգերը և դրանց ապացուցիչ հենքը կազմող միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտները, ինչպես նաև կանոնների հավաքածուները: Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը և շինարարական նորմերի ձեռնարկները ունենալու են ժամանակավոր կիրառման բնույթ, մինչև կանոնների հավաքածուների մշակումը և ներդրումը:

40. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերով ներկայացվող պահանջները պետք է ապահովեն՝

1) շենքերի և շինությունների մեխանիկական անվտանգությունը, ամրությունը և կայունությունը՝ շահագործման հաշվարկային պայմաններում և հաշվարկային ծայրահեղ ազդեցությունների պայմաններում.

2) մարդկանց անվտանգությունը հրդեհի ժամանակ և անշարժ գույքի պահպանությունը՝ հաշվի առնելով ապահովագրումը.

3) մարդկանց անվտանգությունը և կենսապահովման օբյեկտների պաշտպանությունը երկրաշարժերի, սողանքների, փլուզումների և այլ հաշվարկային երկրաֆիզիկական գործընթացների ժամանակ.

4) մարդկանց տեղաշարժի և տեղափոխման, ինժեներական սարքավորանքի համակարգերի սարքերի և սարքվածքների օգտագործման անվտանգությունը, միջավայրի հասանելիությունը

բնակչության սակավաշարժուն խմբերի համար և սենքերի պաշտպանությունը չսանկցիավորված ներխուժումից.

5) մարդկանց կենսագործունեության և աշխատանքի համար բարենպաստ պայմանների ստեղծումը, ներառյալ պատշաճ ջերմաստիճանի, խոնավության, աղմուկի մակարդակի հիգիենիկ պահանջների ապահովումը, ինչպես նաև քիմիական նյութերի, էլեկտրամագնիսական և ռադիացիոն ճառագայթումների անբարենպաստ ազդեցություններից պաշտպանությունը.

6) շրջակա միջավայրի վրա շինարարական օբյեկտների ազդեցության անվտանգ մակարդակի ապահովումը և շահագործման ժամանակ էներգառեսուրսների ծախսի կրճատումը.

7) սպառողներին թյուրիմացության մեջ գցելու գործողությունների կանխարգելման նպատակով շինարարական արտադրանքի անվտանգության հարցերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ապահովումը:

41.Տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակ պետք է հաշվի առնվեն շինարարական արտադրանքի հետևյալ առանձնահատկությունները.

1) շենքերը և շինությունները (անշարժ գույքի օբյեկտները), որպես կանոն, նախատեսված են երկարաժամկետ օգտագործման և շահագործման համար, որը կարող է հասնել 100 և ավելի տարիների: Դրանց կրող կոնստրուկցիաները, որոնց հարաչափերը որոշում են շենքերի և շինությունների մեխանիկական անվտանգությունը, մեծամասամբ հաշվարկվում են շենքերի կամ շինությունների ծառայության ամբողջ ժամկետի համար և ենթակա չեն փոխարինման: Ելնելով դրանից տեխնիկական կանոնակարգերով պետք է նախատեսված լինեն շենքերի և շինությունների շահագործման ողջ ժամանակահատվածի ընթացքում անվտանգության պահանջների հսկողության մեխանիզմները:

2) յուրաքանչյուր շենք և շինություն կառուցվում է դրա օգտագործման և շահագործման տեղում, ամուր կապված է հողի հետ և հանդիսանում է բացառիկ օբյեկտ, որի հատկությունների վրա զգալի ազդեցություն են գործում հողատարածքի բնութագրերը, շինարարության շրջանի կլիմայական պայմանները, քաղաքաշինական սահմանափակումները, շինարարության ժամանակ լուծվող ճարտարապետական և գործառնական խնդիրները, ինչպես նաև տեխնոլոգիական գործընթացների առանձնահատկությունները, որոնց իրականացման համար նախատեսված է այդ օբյեկտը: Այդ պատճառով շենքը կամ շինությունը, ինչպես եզակի արտադրության շինվածք, ի տարբերություն սերիական արդյունաբերական արտադրանքի, չի կարող հանդիսանալ սերիական արտադրանքի համար նախատեսված համապատասխանության հավաստման ընթացակարգի օբյեկտ:

3) շենքի կամ այլ շինության համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մեծամասամբ չի կարող գնահատվել անմիջական փորձարկումների միջոցով, այդ պատճառով շենքերի կամ այլ շինությունների տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության հավաստումը կատարվում է անուղղակի հատկանիշներով, որոնց ներկայացված պահանջները սահմանվում են նախագծային փաստաթղթերում, շինարարության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով շինարարության տեղի կոնկրետ պայմանները: Ընդ որում, պահանջների համապատասխանության հսկողությունը պետք է իրականացվի շինարարության ընթացքում:

42. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի եվրամիության չափանիշներին ներդաշնակման գործընթացը պետք է ընթանա հետևյալ հիմնական ուղղություններով՝

1) քաղաքաշինության, ստանդարտացման և համապատասխանության գնահատման բնագավառների օրենսդրության բարեփոխմամբ,

2) տեխնիկական կանոնակարգերի բազայի մշակմամբ,

3) քաղաքաշինության բնագավառին առնչվող միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտները՝ ազգային ստանդարտի կարգավիճակով ընդունմամբ:

43. Ներդաշնակեցման գործընթացը պետք է իրականացվի աստիճանաբար, հաշվի առնելով քաղաքաշինության ոլորտի առաջնահերթությունները:

44. Հայաստանի Հանրապետությունում 89/106 ԵԵՍ (EEC) Եվրամիության դիրեկտիվին համարժեք, օրենքի կարգավիճակով, պետք է մշակվի և ընդունվի «Շենքերի և շինությունների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգը, որում կսահմանվեն շենքերի և շինությունների անվտանգության ապահովման, դրանց նախագծման, տեղակայման, շահագործման ու քանդման գործընթացներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի պահանջներին դրանց համապատասխանության գնահատման սխեմաներն ու կանոնները: Ի լրումն նշված տեխնիկական կանոնակարգի պետք է մշակվեն նաև շինարարական նյութերի և շինվածքների՝ անվտանգության ապահովման առավել նշանակալից խմբերի տեխնիկական կանոնակարգեր:

45. Հաշվի առնելով միջազգային և եվրոպական ստանդարտների զարգացման և արդիականացման տեմպերը, անհրաժեշտ է նախատեսել նաև տեխնիկական կանոնակարգերի՝ Եվրամիության չափանիշներին համապատասխանության վերլուծության և անհրաժեշտության դեպքում դրանց լրամշակման և փոփոխման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման և մասնակցության մեխանիզմները:

46. Տեխնիկական կանոնակարգերի կիրառումը ապահովելու համար պետք է ձևավորվի համապատասխան ապացուցիչ հենքը, որի հիմքում ընկած կլինեն միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակված ազգային ստանդարտները և շինարարական նորմերի

ձեռնարկները (որոնք նպատակահարմար է ընդունել ազգային ստանդարտի ձևաչափով): Բացի տեխնիկական կանոնակարգերի ապացուցիչ հենք հանդիսացող ազգային ստանդարտներից, պետք է տեղայնացվեն և ընդունվեն նաև այլ պետությունների այն ազգային ստանդարտները և շինարարական նորմերի ձեռնարկները, որոնք հիմք կհանդիսանան շինարարական նյութերի և շինվածքների միջազգային չափանիշներին համապատասխանության կամավոր հավաստման համար:

VII. Համապատասխանության գնահատումը

47. Քաղաքաշինության բնագավառի տեխնիկական կանոնակարգերի ընդունումը իրավական հիմքեր կստեղծի նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջներին շենքերի և շինությունների համապատասխանության գնահատման (համապատասխանության հավաստման, վերահսկողության, փորձարկման) համար:

48. Շենքերի և շինությունների համապատասխանության գնահատումն իրականացվելու է «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող այլ իրավական ակտերի դրույթների շրջանակներում՝ հաշվի առնելով շինարարական արտադրանքի ստեղծման, շինարարությունում ծառայությունների մատուցման և շինարարական արտադրանքի շահագործման առանձնահատկությունները:

49. Համապատասխանության գնահատման ժամանակ փորձարկումներն իրականացվում են ազգային ստանդարտներով սահմանված փորձարկման մեթոդներով:

50. Ավարտված շինարարական օբյեկտի համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերի պահանջներին հաստատվում է պետական շինարարական հսկողության մարմնի եզրակացությամբ՝ տրված օրենսդրությամբ սահմանված կարգով:

